

6

ՕԳՈՍՏՈՍԻ
2020

Luys



Linyu®

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Արմեն Եղիազարյան

Դոցենտ, Հայ-ռուսական համալսարան



Հայաստանի Հանրապետությունը իր 29 տարվա անկախ պետականության գոյության ընթացքում ունեցել է 3 տնտեսական ճգնաժամ՝ 1991-1993թթ., 2009թ. և ներկայիս կորոնավիրուսով պայմանավորված ճգնաժամը, որը սկսվել է 2020թ. մարտից և շարունակվում է մինչ այժմ:

Հստակության նպատակով՝

1) տնտեսական ճգնաժամ կանվանենք այն իրավիճակը, երբ տեղի է ունենում երկրի թողարկման ֆիզիկական ծավալների կրճատումը¹,

2) տնտեսական ճգնաժամի տևողությունը կհամարվի այն ժամանակահատվածը (ամիսներով կամ տարիներով), որի ընթացքում տեղի է ունենում թողարկման ֆիզիկական ծավալների կրճատումը,

3) հետճգնաժամային վերականգնողական ժամանակաշրջան կհամարվի այն ժամանակահատվածը, որի ընթացքում կվերականգնվի թողարկման այն ծավալը, որը եղել է մինչև ճգնաժամի սկիզբը:

Ըստ տարածման կամ ազդեցության աստիճանի՝ ճգնաժամերը կարող են դասակարգվել որպես տեղական կամ ոլորտային, ազգային, տարածաշրջանային² և համաշխարհային:

Երբ տնտեսական ճգնաժամը զուգակցվում է այլ ճգնաժամերի հետ, մասնավորապես՝ պետական կառավարման, կացութաձևերի, բնական և տեխնաժին աղետների հետ, խոսքը վերաբերում է համակարգային ճգնաժամին:

1991-1993թթ. տնտեսական ճգնաժամը

1991-1993թթ. տնտեսական ճգնաժամի հիմնական պատճառը ԽՍՀՄ փլուզումն էր, որը քանդեց տնտեսական կապերը նախկին ԽՍՀՄ հանրապետությունների միջև

¹ Սովորաբար թողարկումը չափվում է որպես հաստատուն գներով ՀՆԱ:

² Այս աշխատանքում որպես տարածաշրջան դիտարկվում է Համաշխարհային բանկի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների խումբը (ECA), որին պատկանում է նաև Հայաստանը:

և ավելի լայն իմաստով՝ նախկին սոցիալիստական երկրների միջև, որոնք բոլորը հայտնվեցին այս կամ այն աստիճանի խորության տնտեսական ճգնաժամի մեջ³:

Բոլոր այդ երկրներում ճգնաժամը կրում էր համակարգային բնույթ՝ պայմանավորված տնտեսական կաթուցածների փոփոխմամբ՝ շուկայական տնտեսական համակարգին անցնելու հետ կապված: Հայաստանում այդ ճգնաժամին ավելացավ Արցախի ազատագրման պատերազմը, դրանով պայմանավորված՝ տրանսպորտային շրջափակումը և էներգետիկ ճգնաժամը: Միաժամանակ, համաշխարհային տնտեսությունում տնտեսական աճը շարունակվում էր՝ միջին տարեկան մոտ 2,5 տոկոս: Այսպիսով, այս ճգնաժամը կրում էր համակարգային և տարածաշրջանային բնույթ:

Ընդհանուր առմամբ, ECA երկրներում ճգնաժամը սկսվեց 1992թ. և տևեց 2 տարի՝ 1992 և 1993թթ.: Եվս 2 տարի պահանջվեց 1991թ. մակարդակը վերականգնելու համար:

Նախկին ԽՍՀՄ երկրների համար ճգնաժամը շատ ավելի ծանր էր, քան ECA այլ երկրների համար: Օրինակ՝ Ռուսաստանում ճգնաժամը սկսեց 1991թ. և տևեց 6 տարի, տնտեսական աճը վերսկսվեց 1997թ., 1990թ. մակարդակը վերականգնվեց միայն 2007թ., իսկ ընդհանուր տնտեսական անկումը 1996թ. դրությամբ կազմեց 40.2 տոկոս՝ 1990թ. նկատմամբ:

Հայաստանում ճգնաժամի տևողությունը ավելի կարճ էր բայց տնտեսական հետևանքները ավելի ծանր էին, քան Ռուսաստանում: Այն տևեց 3 տարի, տնտեսական աճը վերսկսվեց 1994թ. և անընդմեջ շարունակվեց 14 տարի՝ մինչև 2009թ. ճգնաժամը⁴, 1990թ. մակարդակը վերականգնվեց 2004թ., իսկ տնտեսական անկումը 1993թ. դրությամբ կազմեց 53,1 տոկոս կամ 2 անգամից ավելի:

Տնտեսական ճգնաժամը ազդեց տնտեսության բոլոր ոլորտների վրա և հիմնովին փոխեց տնտեսության կառուցվածքը, որը արդեն երբեք չվերականգնվեց հին տեսքով՝ հետ գցելով երկիրը մոտ 15 տարով, ինդուստրիալից դարձնելով հիմնականում ագրարային երկիր: Արդյունաբերությունը ամենատուժած ոլորտներից էր՝ երեք տարվա ընթացքում անկումը կազմեց 57,3%, այդ թվում՝ մշակող արդյունաբերության մեջ՝ 58,1%, արդյունահանող արդյունաբերությունում՝ 37 տոկոս: Ընդհանուր առմամբ, արդյունաբերական արտադրանքի 1990թ. ֆիզիկական ծավալները վերականգնվեցին միայն 2012թ., իսկ արդյունահանող

³ Բացառությամբ Չինաստանի, որի տնտեսական աճի միջին տարեկան տեմպը այդ ժամանակաշրջանում (1991-1995թթ.) կազմում էր մոտ 10 տոկոս: Այսուհետ, եթե այլ բան չի նշվում, վիճակագրական տվյալները վերցված են Համաշխարհային բանկի և Հայստանի վիճակագրական կոմիտեի տվյալների շտեմարաններից:

⁴ Տնտեսական աճի միջին տարեկան տեմպը 1994-2008թթ. կազմեց մոտ 9%, այդ թվում՝ 1994-1997թթ.՝ 5,35%, 1998-2003թթ.՝ 10,6%, 2004-2008թթ.՝ 11,6%:

արդյունաբերության ծավալները՝ արդեն 2001թ.: Արդյունաբերության 1990թ. տեսակարար կշիռը ՀՆԱ-ում մինչև հիմա չի վերականգնվել՝ 2019թ. այն կազմել էր 18,6%՝ 1990թ. 30.2%-ի համեմատ:

Գյուղատնտեսությունը այն ոլորտն էր, որը խոր ճգնաժամի պայմաններում ապահովեց տնտեսության գոյատևումը՝ փրկելով այն վերահաս սովից երկրի ապահնդուստրիալիզացման և աշխատանքի արտադրողականության կտրուկ կրճատման հաշվին: Գյուղատնտեսության այդ կայունացնող դերը հնարավոր դարձավ 1990-1991թթ. իրականացված ագրարային ռեֆորմի հաշվին: Արդյունքում կտրուկ ավելացավ գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 1990թ. 15.8%-ից մինչև 48.6% 1993թ.: Ավելին, գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության այն միակ ոլորտն էր, որտեղ տնտեսական անկումը նվազագույնն էր՝ 10,9% 1993թ., և 1990թ. ծավալները վերականգնվեցին արդեն 1998թ.:

Տնտեսական ճգնաժամերի հիմնական բնութագրիչներից մեկն է՝ մի կողմից՝ պետության տրամադրության տակ գտնվող ֆինանսական ռեսուրսների ծավալների կտրուկ նվազումը, մյուս կողմից՝ ծախսերի ոչ պակաս կտրուկ ավելացման անհրաժեշտությունը: 1990-1994թթ. արտաքին ֆինանսավորման աղբյուրների բացակայության պայմաններում կիրառվում էր բյուջեի պակասուրդի Կենտրոնական բանկի կողմից ինֆլացիոն ֆինանսավորման ձևը, 1990թ. բյուջեն ուներ 13.6% ավելցուկ, 1992թ.՝ 0.25% պակասուրդ, 1993թ.՝ 50,5% պակասուրդ, 1994թ.՝ 38,4% պակասուրդ, իսկ 1995-ից սկսած, երբ հայտնվեցին միջազգային կազմակերպությունների կողմից արտոնյալ արտաքին ֆինանսավորման հնարավորությունները, հաստատվեց մակրոտնտեսական կայունությունը, վերացավ 1992-1993թթ. հիպերսղաճը, սկսեց կրճատվել բյուջեի պակասուրդը (1995թ.՝ ՀՆԱ-ի 6%-ը, 1996թ.՝ ՀՆԱ-ի 4,3%-ը և այլն):

Տնտեսական ճգնաժամերի այլ հիմնական բնութագրիչը՝ երկրի արտաքին տնտեսական կապերի խաթարումն է՝ արտահանումը 1994թ. կազմել էր 1990թ. մակարդակի 65,5%-ը, միաժամանակ երկրի թողարկման կրճատման պայմաններում նվազագույն ներքին սպառումը ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ աճում է ներմուծման դերը. ներմուծումը 1994թ. կազմել էր 1990թ. մակարդակի 91,9%-ը, այսինքն՝ ճգնաժամի ժամանակ վատթարանում է նաև առևտրային հաշվեկշիռը⁵:

⁵ Համակարգային ճգնաժամերի ժամանակ, որպես կանոն, ներմուծման փոխարինման հնարավորությունները, հատկապես Հայաստանի նման փոքր, բաց և տնտեսության մի շարք բազային ճյուղեր չունեցող երկրներում, բավական սահմանափակ են: Մյուս կողմից՝ այդպիսի երկրներում ներմուծման փոխարինման քաղաքականությունը իր սկզբնական փուլերում պահանջում է ներմուծման ծավալների աճ, որի համար բացակայում են անհրաժեշտ ֆինանսական միջոցները, որոնք հիմնականում պետք է ուղղել կրիտիկական ներմուծմանը:

Նշված տիպի համակարգային ճգնաժամերից դուրս գալու և վերականգնողական աճը սկսելու համար Հայաստանի դեպքում տնտեսության համար հիմնական արտաքին պայմանները հետևյալներն էին՝ Արցախյան ազատագրական պատերազմում երկարաժամկետ զինադադարի ապահովումը (1994թ.), տրանսպորտային շրջափակման թուլացումը (1994թ. սկսած), էներգետիկ ճգնաժամի վերացումը (1996թ. ՀԱԷԿ-ի վերագործարկմամբ), որոնք թույլ տվեցին էականորեն թուլացնել ճնշումը տնտեսության վրա, արտաքին արտոնյալ պայմաններով լայնածավալ ֆինանսավորման սկիզբը (1995-ից սկսած)⁶, որը թույլ տվեց նվազեցնել բյուջեի պակասուրդը, դադարեցնել տնտեսության ինֆլյացիոն ֆինանսավորումը (օրենսդրորեն արգելվեց 1997-ից) և հասնել մակրոտնտեսական կայունացմանը՝ հետագայում այն պահպանելով:

Պետք է նշել, որ արտաքին ֆինանսավորումը տնտեսական աճի վերսկսումը, ապա նաև շարունակությունը պայմանավորող հիմնական գործոնն էր⁷ և շարունակում է մնալ այդպիսին:

Աղյուսակ 1. Հայաստանի արտաքին ֆինանսավորման ծավալները 1990-2019թթ., միլիոն ԱՄՆ դոլար ընթացիկ գներով⁸

	1990-1993	1994-1997	1998-2003	2004-2009	2010-2014	2015-2017	2018-2019	1990-2019
Արտաքին ֆինանսավորում	-1092	-2152	-3047	-9483	-11225	-3699	-4151	-34846
ՀՆԱ	6799	6020	12953	44378	52753	32627	26070	181599
% ՀՆԱ նկատմամբ	-16,1	-35,7	-23,5	-21,4	-21,3	-11,3	-15,9	-19,2

Ինչպես երևում է աղյուսակից, Հայաստանի տնտեսության կախվածությունը արտաքին ֆինանսավորումից մնում է շատ բարձր և բավական վտանգավոր՝ չնայած որոշակիորեն պակասել է 1997-ից հետո, հասնելով նվազագույնի 2015-2017թթ. և նորից աճելով 2018-2019թթ.:

⁶ Նշված լայնածավալ վարկավորումը և օգնությունը հնարավոր դարձավ այն պատճառով, որ մնացած աշխարհում, բացի ECA երկրներից, տնտեսական աճը շարունակվում էր, և Հայաստանը բավական արագ իրականացնում էր շուկայական տնտեսության հիմնական տարրերի, ինչպես նաև ժամանակակից պետական ինստիտուտների ներդրումը, որը հանդիսանում էր միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորումը իրականացնելու հիմնական նախապայմանը:

⁷ Արտաքին ֆինանսավորման ծավալները հաշվարկվում են որպես առևտրային հաշվեկշռի գումարներ: Ենթադրվում է, որ եթե հաշվեկշռը բացասական է, երկիրը համարվում է արտաքին ֆինանսավորում ստացող, եթե այն դրական է, երկիրը արտաքին ֆինանսավորում տրամադրող է:

⁸ Այստեղ 1990-1993թթ. ճգնաժամային տարիներն են, 1994-1997թթ.՝ տնտեսության վերականգնողական աճի առաջին փուլն է, 1998-2003թթ.՝ վերականգնողական աճի երկրորդ փուլն է, 2004-2009թթ.՝ տնտեսության հետվերականգնողական աճի ժամանակահատվածը, ներառյալ 2009թ. ճգնաժամը, 2010-2014՝ 2009թ. ճգնաժամից հետո վերականգնողական աճն է, 2015-2017 և 2018-2019թթ.՝ տնտեսական աճի ժամանակահատվածներն են:

Մեր կարծիքով, 1991-1993թթ. ճգնաժամը, լինելով աննախադեպ իր խորությամբ, դժվար թե կրկնվի ապագայում: Այնուամենայնիվ, այդ ճգնաժամի հատկանիշերի մեծ մասը, որի մասին արդեն խոսվել էր, կրկնվեցին 2009թ. և տեղի են ունենում նաև հիմա՝ 2020թ. տնտեսական ճգնաժամի օրոք:

2009թ. տնտեսական ճգնաժամը

1994-2008թթ. Հայաստանում տեղի էր ունենում անընդմեջ տնտեսական աճ՝ միջին տարեկան մոտ 9 տոկոսի չափով, որը նկատելիորեն ավելի բարձր էր միջին համաշխարհային աճի տեմպերից՝ այդ ժամանակաշրջանի համար մոտ 3,3⁹, որը և հնարավորություն տվեց վերականգնել տնտեսության 1990թ. մակարդակը 2004թ. սկսած և ավելացնել ՀՆԱ-ն մոտ 3,5 անգամ¹⁰, իսկ 1 շնչին ընկնող ՀՆԱ-ն՝ մոտ 4,1 անգամ:

Սակայն, 2009թ.¹¹ Հայաստան հասավ ԱՄՆ-ից ծագած համաշխարհային տնտեսական ճգնաժամը, որը Հայաստանի տնտեսության վրա շատ ավելի մեծ ազդեցություն ունեցավ՝ Հայաստանում ՀՆԱ-ն կրճատվեց 14,1%-ով¹², այդ կրճատման մոտ 55%-ը պայմանավորված էր շինարարության ծավալների կրճատմամբ 41,6%-ով: Ճգնաժամի պատճառով կրճատման ենթարկված այլ ոլորտները՝ արդյունաբերությունը՝ մոտ 6%, առևտուրը՝ 3.6%, ծառայությունները՝ 21.8%:

Ծառայությունների գրեթե ամբողջ կրճատումը տեղի է ունեցել տրանսպորտի և անշարժ գույքի ոլորտներում, որից առաջինը պայմանավորված էր արտաքին ապրանքաշրջանառության (ներմուծումը կրճատվել էր 19,2%՝ արտահանումը՝ 13,1%) կրճատմամբ, ինչպես նաև տնտեսական ակտիվության ընդհանուր անկմամբ: Երկրորդը՝ բնութագրիչ է ցանկացած տնտեսական ճգնաժամի համար, երբ տնօրինվող ֆինանսական ռեսուրսների կրճատման պարագայում մարդիկ սկսում են խնայել, և փոխվում են տնային տնտեսությունների ծախսային գերակայությունները՝ հոգուտ սննդամթերքի և հիմնական ծառայությունների և ի վնաս երկարաժամկետ սպառման առարկաների և ինվեստիցիոն բարիքների, ներառյալ՝ անշարժ գույքը:

⁹ Հայաստանը զարգանում էր ավելի արագ, քան համաշխարհային տնտեսությունը բոլոր նշված ժամանակահատվածներում՝ 1994-1997թթ.՝ 5,35%՝ համաշխարհային 3,27% համեմատ, 1998-2003թթ.՝ 10,6%՝ 2,87% համեմատ և 2004-2008թթ.՝ 11,6%՝ 3,77% համեմատ:

¹⁰ Ճգնաժամի վերջին տարվա՝ 1993թ. նկատմամբ:

¹¹ Ավելի ստույգ 2008թ. 4-րդ եռամսյակից, երբ Հայաստանի տնտեսությունում գրանցվեց 1,2% անկում 2007թ. 4 եռամսյակի նկատմամբ և 12,2% նախորդ եռամսյակի նկատմամբ՝ ընդ որում շինարարությունում այդ անկումը կազմեց 12,1% և 31.6% համապատասխանաբար:

¹² Համաշխարհային տնտեսությունը 2009թ. կրճատվեց 1,68%, իսկ ԱՄՆ-ում, որտեղից և ծագել էր ճգնաժամը, այն տևեց 2 տարի՝ 2008թ. ՀՆԱ-ն կրճատվեց 0,13%, իսկ 2009թ.՝ 2,53%:

Հատկանշական է, որ այն պարագայում, երբ ԱՄՆ-ում և մի շարք այլ երկրներում ճգնաժամը սկսել է անշարժ գույքի ֆինանսավորման շուկայում¹³ և հետագայում տարածվել նաև տնտեսության իրական հատվածների վրա, Հայաստանում ֆինանսական ճգնաժամ չի եղել այն պարզ պատճառով, որ հիպոթեքային մասսայական վարկավորում չի եղել:

2008թ. վերջի դրությամբ բանկային վարկերի հարաբերությունը ՀՆԱ-ին կազմել է 18.2%, որից հիպոթեքային վարկերը՝ 83,6 միլիարդ դրամ կամ ՀՆԱ-ի 2,3%-ը: 2019թ. վերջի դրությամբ վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել էր արդեն 53,2%, իսկ հիպոթեքային վարկերի ծավալը՝ 363,4 միլիարդ դրամ կամ ՀՆԱ-ի 5,55%-ը: Մյուս կողմից 2008թ. հիպոթեքային վարկավորումը ծածկում էր այդ տարվա ոչ պետական շինարարության ծավալների 10.5%-ը, 2019թ.՝ արդեն 118.7%-ը: Այսպիսով, հիպոթեքային վարկավորման արագացված զարգացման շարունակությունը, հատկապես ներկայիս ճգնաժամի պայմաններում ստեղծում է անշարժ գույքի շուկայի և դրանից բխող ֆինանսական համակարգի խոր ճգնաժամի իրական նախապայմաններ:

Ինչ վերաբերում է պետական գործողություններին 2009թ. ճգնաժամի օրոք, ապա քանի որ Հայաստանում ֆինանսական ճգնաժամ, ինչպես նաև համակարգաստեղծ բիզնեսների սնանկացման վտանգ չի եղել, քանակական թուլացման (quantitative easing) կամ ձեռքբերման (bail out)¹⁴ քաղաքականությունները չեն կիրառվել: Կիրառվել են ճգնաժամի համար անխուսափելի պետական եկամուտների նվազումից և ծախսերի ավելացման անհրաժեշտությունից բխող բյուջեի պակասուրդի ավելացման գործողությունները (2009թ. պետական բյուջեի պակասուրդը կազմեց ՀՆԱ 7,5%-ը՝ 2008թ. 0,7%-ի համեմատ), ինչպես նաև կիրառվեցին առանձին հասցեական միջոցառումներ առանձին տուժած ոլորտներին աջակցելու նպատակով:

¹³ Հայտնի է որ ճգնաժամի հիմնական պատճառը՝ ԱՄՆ-ում անշարժ գույքի ձեռքբերման արհեստական խրախուսումն էր (subprime mortgage crisis), որը պայմանավորված էր ներդրումային գործունեության ապակարգավորմամբ, և դրանից բխող՝ գնալով ավելացող քանակով տնային տնտեսությունների ներգրավումը անշարժ գույքի շուկա, որոնցից նկատելի և աճող մասը վճարունակ չէին: Ամբողջ գործընթացը հիմնված էր անշարժ գույքի գների առաջանցիկ աճի սպասումների վրա: Անվճարունակ վարկատուների քանակի ավելացման պարագայում գները սկսեցին նվազել, որը և դրեց ֆինանսական ճգնաժամի հիմքերը:

¹⁴ Quantitative easing՝ երբ Կենտրոնական բանկը ձեռք է բերում մասնավոր ֆինանսական կազմակերպությունների արժեթղթերը՝ առանց դրանց իրական տոկոսադրույքները հաշվի առնելու, տրամադրելով դրանց համապատասխան ֆինանսական միջոցներ, bail out՝ համապատասխան ֆինանսական կամ ոչ ֆինանսական կազմակերպությունների բաժնեմասի ձեռքբերում՝ դրա դիմաց ֆինանսավորման հատկացմամբ կազմակերպության կողմից դրա հետագա հետգնման պայմանով:

Տնտեսական աճը Հայաստանում, ինչպես նաև ամբողջ աշխարհում վերականգնվեց արդեն 2010թ.¹⁵, իսկ մինչդեռ 2008թ. մակարդակին հասնելու համար Հայաստանից պահանջվեց 4 տարի:

Հատկանշական է, որ 2009թ. տնտեսական ճգնաժամից տուժեցին Հայաստանի տնտեսության ամենաարագ զարգացող ոլորտները, իսկ ճգնաժամի հաղթահարման արդյունքում ձևավորվեց տնտեսության նոր կառուցվածք՝ զարգացման նոր շարժիչ ուժերով:

Աղյուսակ 2. Տնտեսական աճի ոլորտային աղբյուրները Հայաստանում 1990-2019թթ., համադրելի գներով՝ միլիոն 2019թ. ԱՄՆ դոլար

	1994-1997	1998-2003	2004-2008	2009	2010-2013	2014-2017	2018-2019	1994-2019
Գումարային տնտեսական աճ	674,6	2360,1	4342,5	-1449,1	1632,6	1586,3	1589,7	10736,6
որից՝								
Արդյունաբերություն	109,4	382,8	135,3	-87,0	462,1	447,5	363,7	1813,7
Արդյունահանող	3,6	56,6	22,1	6,75	81,25	186,0	15,5	371,9
Մշակող	56,6	300,1	60,0	-39,6	314,9	260,5	324,2	1276,8
Էներգետիկա	49,2	26,0	53,2	-54,2	65,9	0,95	24,1	165,2
Գյուղատնտեսություն	29,8	257,7	436,0	82,2	189,3	137,9	-219,3	913,6
Ծինարարություն	49,4	500,7	1200,8	-798	-134,2	-180,3	40,6	679,0
Առևտուր	203,6	306,0	386,6	-52,3	144,8	216,7	255,0	1460,5
Ծառայություններ	114,9	626,2	1541,9	-327,9	636,5	930,7	948,1	4470,3
Ավելացված ավել	507,1	2073,4	3700,5	-1182,9	1298,4	1552,5	1388,3	9337,3
Զուտ հարկեր	167,5	286,7	642,0	-266,2	334,2	33,8	201,4	1399,3

Ինչպես երևում է Աղյուսակ 2-ից, 1994-1997թթ. վերականգնողական աճը հիմնականում պայմանավորված էր նորմալ կենսապայմաններին վերադարձով, ինչպես հետագայում կերևա, առանձնապես կապված չեր ներդրումների ծավալի ավելացման հետ և հիմնվում էր արդեն գոյություն ունեցող հզորությունների վերագործարկման վրա, իսկ ներդրումները հիմնականում իրագործվում էին արտադրական ենթակառուցվածքների վերագործարկման համար (օրինակ՝ ՀԱԷԿ-ի վերագործարկումը 1996թ.): Զուտ հարկերի բարձր տեսակարար կշիռը տնտեսական աճի մեջ պայմանավորված էր ներմուծումից ԱԱՀ սահմանում հարկելով 1997-ից սկսած:

Վերականգնողական աճի երկրորդ փուլում (1998-2003թթ.) արդեն հայտնվում է նշանակալի և գնալով աճող ներդրումային բաղադրիչը, շինարարությունը սկսում է դառնալ երկրի զարգացման հիմնական շարժիչ ուժը, գերազանցելով արդյունաբերությանը, գյուղատնտեսությանը և առևտրին, զիջելով միայն

¹⁵ Հայաստանում՝ 2,2%, համաշխարհային տնտեսության մեջ՝ 4,3%:

ծառայությունների ոլորտին (տե՛ս Աղյուսակ 3, որը ցույց է տալիս յուրաքանչյուր ոլորտի ավանդը գումարային տնտեսական աճի մեջ):

Աղյուսակ 3. Տնտեսական աճի ոլորտային աղբյուրները Հայաստանում 1990-2019թթ., տոկոսներով

	1994-1997	1998-2003	2004-2008	2009	2010-2013	2014-2017	2018-2019	1994-2019
Գումարային տնտեսական աճ	100,0	100,0	100,0	-100,0	100,0	100,0	100,0	100,0
որից՝								
Արդյունաբերություն	16,2	16,2	3,1	-6,0	28,3	28,2	22,9	16,9
Արդյունահանող	0,5	2,4	0,5	0,5	5,0	11,7	1,0	3,5
Մշակող	8,4	12,7	1,4	-2,7	19,3	16,4	20,4	11,9
Էներգետիկա	7,3	1,1	1,2	-3,7	4,0	0,2	1,5	1,5
Գյուղատնտեսություն	4,4	10,9	10,0	5,7	11,6	8,7	-13,8	8,5
Շինարարություն	7,3	21,2	27,7	-55,1	-8,2	-11,4	2,6	6,3
Առևտուր	30,2	13,0	8,9	-3,6	8,9	13,7	16,0	13,6
Ծառայություններ	17,0	26,5	35,5	-22,6	39,0	58,7	59,6	41,6
Ավելացված ամբ	75,2	87,9	85,2	-81,6	79,5	97,9	87,3	87,0
Զուտ հարկեր	24,8	12,1	14,8	-18,4	20,5	2,1	12,7	13,0

2004-2008թթ. տնտեսության կառուցվածքը և հետևաբար տնտեսական աճի հիմնական աղբյուրները կտրուկ փոխվեցին՝ շինարարությունը և ծառայությունները միասին ապահովեցին գումարային տնտեսական աճի 63,2%-ը՝ նախորդ ժամանակահատվածի 47,7%-ի համեմատ, իսկ արդյունաբերության և գյուղատնտեսության ավանդը կազմեց ընդամենը 13,1%՝ նախորդ ժամանակահատվածի 27,1% համեմատ: Շինարարության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 1994թ. 5,8%-ից հասավ 2008թ. մինչև 18,7%, արդյունաբերությանը՝ 26,1%-ից իջավ մինչև 13,2%, իսկ գյուղատնտեսությանը՝ 22,6%-ից մինչև 13,6%: Պետք է նշել որ այդ ժամանակահատվածում ապահովվեց երկրի ամենաարագ զարգացումը, որի արդյունքում 4 տարվա ընթացքում ՀՆԱ-ն ավելացավ մոտ 2 անգամ:

Երկրի զարգացման այդ մոդելը, որը գերակայություն էր տալիս արտահանման առարկա չհանդիսացող ոլորտների զարգացմանը (non-tradeables) արտահանման կամ ներմուծման փոխարինման ներուժ ունեցող ոլորտների նկատմամբ և հիմնված էր անշարժ գույքի գների աճի դրական սպասումների վրա¹⁶, զոհ գնաց 2007-2009թթ. ֆինանսական ճգնաժամին, որի ընթացքում, ինչպես սովորաբար տեղի է ունենում միջազգային ճգնաժամերի ժամանակ, ներդրումները զարգացող շուկաներում, որոնց

¹⁶ Երևանում անշարժ գույքի միջին շուկայական գները 2004թ. կազմել են 122,5 հազար դրամ, իսկ 2008թ.՝ 296,3 հազար դրամ՝ նվազելով 2009թ. մինչև 265,8 հազար դրամ: Միևնույն ժամանակ գործարքների քանակը Երևանում 2009թ. նվազել է 23,5%-ով՝ 2008թ. համեմատ:

թվում է նաև Հայաստանը, կտրուկ կրճատվում են ռիսկայնության աճի պաճառով (ներդրումների փախուստ):

Զարգացման այն շղթան, որը դրական սպասումների ժամանակ ավելացնում էր ներդրումների ծավալը և նպաստում հիմնական զարգացող ոլորտի (տվյալ դեպքում՝ շինարարությանը) և դրան սպասարկող ոլորտների զարգացմանը՝ շինանյութերի, փայտամշակման, մետաղների արտադրության և այլն, ինչպես դրա հետ կապված ներմուծման աճին, սպասումները փոխվելու դեպքում սկսում է աշխատել հակառակ ուղղությամբ, որով և պայմանավորված են այն ոլորտային կրճատումները, որոնք տեղի ունեցան 2009թ. հիմնականում շինարարության աննախադեպ անկման պատճառով: Եվ որքան ավելի ուժեղ էր այդ ոլորտների կապը հիմնական զարգացող ոլորտի հետ, այնքան բարձր էր կրճատման չափը:

2010-2013թթ. ճգնաժամից վերականգման շրջանն էր, երբ անհրաժեշտաբար կրճատվեցին աճի տեմպերը ներդրումների փախուստի պատճառով և սկսվեց ձևավորվել տնտեսության նոր կառուցվածք, որտեղ ծառայությունները մնացին զարգացման հիմնական շարժիչ ուժը, որի հետ մեկտեղ շարժիչ ուժեր սկսեցին դառնալ արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը, ավելացնելով տնտեսության արտահանման ներուժը՝ տնտեսությունը սկսեց ձեռք բերել որոշակի արտահանման ուղղություն, իսկ շինարարությունը շարունակվեց կրճատվել:

2014-2017թթ. տնտեսության արտահանման ուղղությունը պահպանվեց, սակայն ավելացավ ծառայությունների դերը որպես տնտեսական աճի հիմնական աղբյուր, և նրա ավանդը դարձավ ավելի մեծ, քան մնացած այլ ոլորտների գումարային ավանդը:

Ծառայությունների դերը որպես տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժ ավելի խորացավ 2018-2019թթ., շարունակվեց նաև գյուղատնտեսության անկումը, որը սկսել էր դեռևս 2016թ. և պայմանավորված էր գյուղատնտեսության հարաբերական շահութաբերության անընհատ գնացող կրճատմամբ և գյուղատնտեսության օժանդակության արդյունավետ համակարգի բացակայությամբ:

Աղյուսակ 4. Տնտեսական աճի ձևավորման աղբյուրները Հայաստանում 1990-2019թթ., համադրելի գներով՝ միլիոն 2019թ. ԱՄՆ դոլար

	1991-1993	1994-1997	1998-2003	2004-2008	2009	2010-2013	2014-2017	2018-2019	1994-2019
ՀՆԱ փոփոխություն	-3288	674,5	2360	4342,5	-1449	1633	1586	1590	10737
Վերջնական սպառում, տնային տնտեսություններ	-1817	791	1622	2765,1	-359	1295	313	2202	8630
Վերջնական սպառում, պետություն	62	6,5	183	479,9	-14,2	195	12,6	112	1118
Համախառն կուտակում	-42	388	665,5	2240	-1109	-322	21	441	2288
Ընդամենը՝ ներքին սպառում	-1797	1186	2470	5484	-1482	1169	347	2755	12035
Ապրանքների ու ծառայությունների արտահանում	-1129	-324	1400	-242	-195	1187	1655	610	4092
Արտաքին ֆինանսավորում	-362	-187,5	-1510	-900	228	-723	-416	-1775	-5391

Աղյուսակներ 4-ում և 5-ում ներկայացվում են տնտեսական աճի/ճգնաժամի աղբյուրները՝ կախված դրանց տեղից՝ ներքին օգտագործում կամ արտահանում, ինչպես նաև տնտեսության ֆինանսական կապերը աճի/ճգնաժամի ընթացքում արտաքին աշխարհի հետ:

Ինչպես ցույց են տալիս աղյուսակները, 1994թ. սկսած Հայաստանը խոր կախվածություն է ունեցել արտաքին ֆինանսավորումից, որի հաշվին միջին հաշվով ֆինանսավորվել է տնտեսական աճի կեսը: Կախվածությունը արտաքին ֆինանսավորումից առավելագույնն էր 2018-2019թթ., երբ արտաքին ֆինանսավորման աճը գերազանցեց ՀՆԱ-ի աճը 11,7%-ով, նվազագույնն էր 2000-2008թթ.:՝ երբ արտաքին ֆինանսավորման հաշվին ապահովվել էր տնտեսության աճի մոտ 20%-ը: 2014-2017թթ. արտաքին ֆինանսավորման հաշվին ապահովվել էր տնտեսական աճի 26,6%-ը:

Աղյուսակ 5. Տնտեսական աճի ձևավորման աղբյուրները Հայաստանում 1990-2019թթ., տոկոսներով

	1991-1993	1994-1997	1998-2003	2004-2008	2009	2010-2013	2014-2017	2018-2019	1994-2019
ՀՆԱ փոփոխություն	100,0	100,0	100,0	100,0	-100,0	100,0	100,0	100,0	100,0
Վերջնական սպառում, տնային տնտեսություններ	55,3	117,3	68,7	63,7	-24,8	79,3	19,8	138,5	80,4
Վերջնական սպառում, պետություն	-1,9	1,0	7,7	11,1	-1,0	12,0	0,8	7,1	10,4
Համախառն կուտակում	1,3	57,6	28,2	51,6	-76,6	-19,7	1,3	27,7	21,3
Ընդամենը՝ ներքին սպառում	54,7	175,8	104,7	126,3	-102,3	71,6	21,9	173,3	112,1
Ապրանքների ու ծառայությունների արտահանում	34,3	-48,0	59,3	-5,6	-13,4	72,7	104,3	38,4	38,1
Արտաքին ֆինանսավորում	11,0	-27,8	-64,0	-20,7	15,7	-44,3	-26,2	-111,7	-50,2

Արտահանումը հանդիսացել է տնտեսական աճի նշանակալի աղբյուր 1998-2003թթ., երբ արտահանման հաշվին ապահովվել է տնտեսական աճի մոտ 1/3-ը և 2014-2017թթ., երբ ամբողջ տնտեսական աճը ապահովվել է արտահանման հաշվին: 2004-2008թթ. համախառն կուտակումը ուներ առավելագույն ավանդ տնտեսական աճի մեջ, և դա այդ ժամանակահատվածում ապահովեց տնտեսական աճի երկնիշջուցանիշներ:

2020թ. տնտեսական ճգնաժամը

2020թ. տնտեսական ճգնաժամը 2009թ. ճգնաժամի պես ունի համաշխարհային բնույթ, դեռ ընթանում է և պարզ չէ, թե երբ կավարտվի, ինչպիսին կլինի վերջնական անկումը¹⁷: Ի տարբերություն 2009թ. ճգնաժամի՝ այն ունի արհեստական բնույթ., պայմանավորված է Հայաստանում, ինչպես նաև այլ երկրներում¹⁸ մարտ-ապրիլ ամիսներին տնտեսության նշանակալի մասը կանգնեցնելով և դրա աստիճանական վերագործարկմամբ՝ սկսած մայիսից: Խնդրի մյուս մասը պայմանավորված է մարդկանց միջազգային տեղաշարժի սահմանափակմամբ, որը նույնպես աստիճանաբար թուլացվում է աշխարհում, բայց էական ազդեցություն թողեց ծառայությունների արտահանման և ներմուծման վրա:

Հայաստանի իշխանությունների գործողությունների վերլուծությունը կորոնավիրուսի դեմ պայքարի կազմակերպման և առողջապահության համակարգի արդյունավետ օգտագործման, ինչպես նաև բնակչության և բիզնեսներին օժանդակելու և տնտեսությունը վերագործարկելու գործում առանձին հետազոտության առարկա են և այստեղ չեն քննարկվելու:

Այսօրվա եղած տեղեկատվության սահմաններում¹⁹ փորձենք իրականացնել երկու ճգնաժամերի համեմատական վերլուծությունները.

¹⁷ Համաձայն IMF 2020թ. հունիսի կանխատեսումների համաշխարհային տնտեսության անկումը կկազմի 4,9%՝ նկատելիորեն ավելի շատ, քան 1,68% անկումը 2009թ. ֆինանսական ճգնաժամի պատճառով: Կանխատեսվում է, որ համաշխարհային տնտեսությունը կվերականգնվի արդեն 2021թ. և աճի տեմպը կկազմի մոտ 5,6%: Ընդ որում, զարգացած երկրների համար անկումը գնահատվում է միջինը 8%, Միջին արևելքի և Կենտրոնական Ասիայի երկրների համար՝ 4,7%, իսկ համաշխարհային առևտուրը կնվազի 11,9%: Հայաստանի համար տնտեսական անկումը կանխատեսվում է 1,5%:

¹⁸ Բացառությամբ Շվեդիայի, Բելառուսի և մասամբ՝ Նիդեռլանդների:

¹⁹ Հունիսի համար ինֆորմացիան ունի նախնական բնույթ, 2020թ. առաջին կիսամյակի ՀՆԱ-ի և դրա կառուցվածքի մասին տվյալները հայտնի կդառնան սեպտեմբերի սկզբին, այդ պատճառով 2020թ. ճգնաժամին վերաբերող տվյալները ենթակա են վերանայման:

Աղյուսակ 6. 2009թ. և 2020թ. ճգնաժամերի ոլորտային բնութագրերը

	2009	2020		2009	2020
ՀՆԱ	-14,1	-4,7*	Ծառայություններ	-9,7	-6,2
Գյուղատնտեսություն	5,9	1,7	Կացություն ու հանրային սնունդ	23,5	-34,9
Արդյունաբերություն	-6,4	1,5	Մշակույթ, զվարճություն, հանգիստ	3,4	4,8
Արդյունահանող	6,3	25,7**	Կրթություն	2,2	-17,2
Մշակող	-5	-3,4**	Առողջապահություն	-5,4	-10,2
Էներգետիկա	-12	3,4**	Անշարժ գույքի հետ կապված	-20,7	-12,8
Ծինարարություն	-41,6	-23,4	Տեղեկատվություն ու կապ	10,9	5,4
Առևտուր	-5,3	-11,1	Տրանսպորտ	-28,3	-22,1
Ծառայություններ	-9,7	-6,2	Ֆինանսական ու ապահովագրական	-1,6	11,7

* 2020թ. հունիսի նախնական տվյալներ, ** 2020թ. մայիսի տվյալներ

Առաջին հայացքից աղյուսակ 6-ից երևում է, որ 2020թ. ճգնաժամի խորությունը մայիս-հունիսի դրությամբ էականորեն ավելի ցածր է, քան 2009թ. ճգնաժամինը: Հաջորդ եզրակացությունը, որ կարելի է անել, այն է, որ ճգնաժամից տուժած ոլորտները երկու դեպքերում մոտավորապես նույնն են, բացառությամբ կացության և հասարակական սննդի կազմակերպման ոլորտից, որը զարգացել է 2009թ. ճգնաժամի օրոք և խոր անկում է ապրել 2020թ., ինչպես նաև ֆինանսական և ապահովագրական ոլորտի, որը նվազել էր 2009թ., բայց բավական արագ զարգացել է 2020թ. 5 ամիսների ընթացքում:

Անհանգստացնող են զարգացումները անշարժ գույքի շուկայում²⁰, որտեղ ապրիլին գործարքների քանակը կրճատվել էր մարտի նկատմամբ 5-ից ավելի անգամ, մայիսին՝ էականորեն ավելացել է՝ կազմելով 2009թ. մայիսի գործարքների մոտ 67%-ը, ընդ որում, ի տարբերություն 2009 թվականի՝ գների իջեցում գրեթե չի եղել²¹: Եկամուտների և աշխատատեղերի հետ կապված բարձր անորոշության ներկայիս պայմաններում անշարժ գույքի շուկայի արհեստական խրախուսումը եկամտահարկի հաշվին հիպոթեքային վարկերի տոկոսների սուբսիդավորման միջոցով կարող է, ինչպես արդեն նշվել է, բերել անշարժ գույքի շուկայի լայնածավալ ճգնաժամի և բացասաբար անրադառնալ ֆինանսական համակարգի դեռ պահպանվող կայունության վրա²²:

²⁰ 2019թ. դրությամբ անշարժ գույքի հետ կապված գործարքները կազմել են ՀՆԱ 7,8%:

²¹ 2009թ. տվյալները բերված են ծանուցում 16-ում:

²² ՀՀ ԿԲ տվյալներով 2020թ. հունիսի դրությամբ հիպոթեքային վարկերը կազմել են 404,6 միլիարդ դրամ՝ 2019թ. դեկտեմբերի 363,4 միլիարդ դրամի համեմատ, այն դեպքում երբ շինարարության ծավալները 2020թ. հունվար-հունիսին նվազել են 23,4%-ով՝ 2019թ. հունվար-հունիսի նկատմամբ, իսկ անշարժ գույքի շուկայում ակտիվությունը նվազել է մոտ 1/3-ով:

Առևտրի ծավալների կրճատումը 2020թ. նկատելիորեն ավելի մեծ է, քան 2009թ.: Հիմքեր կան կարծելու, որ ոչ պարենային ապրանքների շրջանառությունը կրճատվել է նկատելիորեն ավելի մեծ ծավալներով, քան պարենային առևտուրը²³, որը սովորաբար տեղի է ունենում տնտեսական ճգնաժամի ժամանակ, և որը իր հերթին բացասական հակադարձ կապի մեխանիզմով ավելի շատ է կրճատում առևտրի ծավալները:

2009թ. դրությամբ արտահանման ծավալների անկումը կազմել էր 10,4%, ընդ որում, ապրանքային արտահանումը կրճատվել էր 34%-ով, իսկ ծառայությունների արտահանումը աճել էր 23%-ով: Դա բացատրվում է նրանով, որ մի շարք ծառայություններ, ներառյալ տուրիզմը (վճարային հաշվեկշռում ներկայացված է որպես ճանապարհորդություններ)²⁴, տեղեկատվությունը և կապը (աճի տեմպը 2009թ.՝ 10,4%), ուղևորափոխադրումները, որոնք կազմում են ծառայությունների արտահանման նկատելի մասը, աճել են: 2020թ. հունվար-հունիսի նախնական տվյալներով ապրանքային արտահանումը կրճատվել է 6,5%-ով, սակայն ելնելով ասվածից, ծառայությունների արտահանման անկումը, որը 2019թ. կազմել էր ընդհանուր արտահանման 48,5%-ը, պետք է նկատելիորեն ավելի մեծ լինի:

Ինչ վերաբերում է ֆինանսական համակարգին, ապա անհանգստացնող է այն հանգամանքը, որ ճգնաժամի պայմաններում 2020թ. հունվար-մայիսին այն աճել է 11,7%-ով, ընդ որում՝ վարկավորման տոկոսները ըստ էության չեն նվազել²⁵: Մեր կարծիքով, դրա հիմնական պատճառը կառավարության կողմից բանկային համակարգի ակտիվ և ընդլայնվող ներգրավումն է զանազան տիպի օժանդակության ծրագրերի մեջ՝ հիմնականում տոկոսադրույքների սուբսիդավորման միջոցով, որը տնտեսության անորոշ հեռանկարների պարագայում նախ էականորեն թանկացնում է օժանդակության ծրագրերի արժեքը և, որ ավելի կարևոր է՝ ավելացնում է ռիսկերը և՛ վարկատուների, և՛ վարկառուների համար:

Այսպիսով, ներկայիս ճգնաժամում առկա են ռիսկեր, որոնք բացակայում էին 2009թ. ճգնաժամի օրոք և ավելացնում են հետագա զարգացման անորոշության աստիճանը:

²³ 2020թ. համար այդ տվյալները հասանելի չեն:

²⁴ 2009թ. ներգնա զբոսաշրջությունը աճել էր 3%-ով, իսկ 2020 1-ին եռամսյակի տվյալներով կրճատվել էր 14,6%: Ենթադրաբար, հունիս ամսվա դրությամբ կրճատումը շատ ավելի մեծ պետք է լինի:

²⁵ Սովորաբար ճգնաժամի պայմաններում փողի գինը՝ այսինքն վարկի տոկոսը, էականորեն նվազում է, որը հանդիսանում է ճգնաժամից դուրս գալու արդյունավետ գործիքներից մեկը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: